ԽԱԲԵՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Լ. Ն.

Քրեաիրավական հարաբերությունների ձևավորման և զարգացման միտումների առանձնահատկություններից անկախ՝ կան հանրորեն վտանգավոր արարքներ, որոնց համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում ժամանակակից աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Ուշագրավ են սեփականության իրավունքի դեմ ուղղված կամ այսպես կոչված «գույքային հանցագործությունների» քրեաիրավական վերլուծությունը և տարբեր պետություններում առկա փորձի համադրումը:

Ի սկզբանե պետք է փաստել, որ տարբեր երկրների քրեական օրենսգրքերով նախատեսված հանցակազմերի վերլուծությունը և համադրումը ինքնանպատակ չեն, այլ միտված են դրական փորձի ուսումնասիրությանը և ՀՀ քրեական օրենսգրքի հետագա արդյունավետ լրամշակմանը:

Պետք է նշել, որ զարգացած իրավական համակարգ ունեցող պետություններում բավականաչափ մեծ ուշադրություն է դարձվում սեփականության իրավունքի համապարփակ պաշտպանությանը, այդ թվում՝ քրեաիրավական միջոցներով: Խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով կատարվող գույքային հանցագործություններ, այս կամ այն ձևակերպմամբ, առկա են տարբեր պետությունների քրեական օրենսգրքերում: Ընդ որում՝ նմանատիպ հանցավոր դրսևորումների նկատմամբ առանձին երկրներում առկա են տարբեր մոտեցումներ, որը պայմանավորված է ինչպես կոնկրետ երկրի քրեաիրավական օրենսդրության առանձնահատկություններով, այնպես էլ իրավակարգավորումների պատմականորեն ձևավորված յուրահատկություններով: Տարբեր պետությունների քրեական օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ արտասահմանյան երկրներում բացակայում է հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների հստակ տարանջատումը: Այստեղից հետևում է, որ արտասահմանյան երկրների օրենսդրությամբ քրեական պատասխանատվության առանձնահատկությունները կապված չեն այն հանգամանքի հետ՝ արդյո՞ք հանցավորը տիրացել է ուրիշի գույքին, թե՞ հանցանքը կատարվել է ուրիշին գույքային վնաս պատճառելու այլ եղանակով:

Այլ պետությունների (այստեղ խոսքը ԱՊՀ անդամ հետխորհրդային պետությունների քրեական օրենսգրքերի մասին չէ, քանի որ դրանք հիմնականում կառուցված են «մոդելային» քրեական օրենսգրքի հիման վրա և շատ հարցերում աչքի են ընկնում համանման մոտեցումներով) քրեական օրենսդրության ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ որևէ արտասահմանյան երկրի քրեական օրենսգրքով խաբեության կամ վստահությունը

չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը նախատեսված չէ: Հանցավոր արարքի քննարկվող տեսակը կա՛մ ներառված է խարդախության և վստահությունը չարաշահելու հանցակազմով, կա՛մ էլ հանդես է գալիս որպես գույքային վնաս պատճառելու մասնավոր դրսևորում:

Գերմանական օրենսդիրը մեծ ուշադրություն է դարձնում տարբեր տեսակի չարաշահումների և խաբեության միջոցով կատարվող հանցագործություններից սեփականության իրավահարաբերությունների արդյունավետ քրեաիրավական պաշտպանության հիմնախնդրին: Այսպես, ԳԴՀ քրեական օրենսգրքի 22-րդ բաժինը վերնագրված է՝ «Խարդախությունը և վստահության հանցավոր չարաշահումը»: Խարդախության հանցակազմը նախատեսված է նշված բաժնի 1. «263-ով: Համաձայն այս նորմի՝ պատժի է ենթակա այն անձը, որն ուրիշին գույքային վնաս է պատճառում նրան մոլորության մեջ գցելու կամ մոլորության մեջ պահելու ձևով, ինչն արտահայտվում է տուժողին կեղծ փաստեր հայտնելու, իրական փաստերը խեղաթյուրելու կամ դրանք չհայտնելու ձևով[1]:

Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Բոյցովը, գերմանական քրեական օրենսդրությամբ տվյալ հանցակազմի առարկան սահմանված չէ, ինչից հետևում է, որ տվյալ արարքի հետևանքով վնասը կարող է դրսևորվել ինչպես գույքի կորստի, այնպես էլ բաց թողնված օգուտի տեսքով[2]:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցակազմին իր բովանդակությամբ առավել մոտ է գերմանական քրեական օրենսգրքի «265a նորմը, որը վերաբերում է խաբեության միջոցով օգուտ ստանալուն: Համաձայն այս նորմի՝ պատժի է ենթակա այն անձը, որը որևէ ապրանք է ստանում ավտոմատ վաճառքի մեքենայից կամ օգտագործում է հանրային կարիքների համար նախատեսված հեռահաղորդակցության ցանցը կամ օգտվում է տրանսպորտից կամ մուտք է գործում որևէ հիմնարկ կամ միջոցառում խաբեության ճանապարհով՝ առանց համապատասխան գումար վճարելու:

Ինչպես տեսնում ենք, գերմանական օրենսդիրը հստակ թվարկել է այն արարքների ցանկը, որոնց միջոցով կարող է գույքային վնաս պատճառվել: Նման մոտեցումը, կարծում ենք, այնքան էլ ընդունելի չէ, քանզի փոփոխական իրականության մեջ միշտ էլ կգտնվեն գույքային վնաս պատճառելու տարատեսակ նոր եղանակներ:

ԳԴՀ քրեական օրենսգրքի «266-ը պատասխանատվություն է նախատեսում անձի կողմից օրենքով, պայմանագրի ուժով կամ իշ-խանությունների հանձնարարությամբ իրեն վստահված գույքի կամ գույքային իրավունքի նկատմամբ չարաշահումներ իրականացնելու համար, որը վնաս է պատճառել սեփականատիրոջը: Վստահությունը չարաշահելու ներքո գերմանական օրենսդիրը հասկանում է

---

[1] Տե՛ս УК Германии. www.constitutions.ru

[2] Տե՛ս **Бойцов А. И.** *Преступления против собственности, СПб., 2002, с. 80.*

գույքը պատշաճ կերպով պահպանելու և օգտագործելու պարտա-վորության դիտավորյալ չկատարումը: Ընդ որում, քննարկվող արարքն ուղղված է հենց գույքային վնաս պատճառելուն, այլ ոչ թե հափշտակությանը կամ գույքային օգուտ ստանալուն, այլապես կատարվածը կորակվի որպես գողություն, խարդախություն կամ յուրացում:

ԳՖՀ քրեական օրենսգրքի «248c-ն պատասխանատվություն է նա-խատեսում էլեկտրաէներգիայի հափշտակության համար: Քննարկվող հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքի էությունն այն է, որ անձը, առանց համապատասխան թույլտվության, օգտագործում է ուրիշին պատկանող էլեկտրականություն արտադրող սարքը կամ համապատասխան հաղորդիչների միջոցով միանում է այլ անձին պատկանող կամ հանրային էլեկտրական ցանցին՝ իր կամ երրորդ անձանց օգտին էլեկտրաէներգիա հափշտակելու նպատակով:

Գերմանիայի քրեական օրենսգիրքը նախատեսում է նաև խար-դախության միջոցով սուբսիդիաներ ստանալու հանցակազմը: ԳԴՀ քրեական օրենսգրքի «264-ը պատասխանատվություն է սահմանում սուբսիդավորող մարմնին կամ դրա ներկայացուցչին սխալ կամ ոչ լիարժեք տվյալներ ներկայացնելու համար, որի նպատակն է իր կամ երրորդ անձի օգտին ապօրինի սուբսիդիաներ ստանալը: Բացի այդ, գերմանական օրենսդիրն առանձնացնում է ևս մի շարք հանցակազմեր, որոնք գույքային վնաս պատճառելու առանձին դրսևորումներ են: Այսպես, ԳԴՀ քրեական օրենսգրքի «264a-ն պատասխանատվություն է նախատեսում ներդրումային ոլորտում կատարվող խարդախությունների, «265-ը՝ ապահովագրության հետ կապված չարաշահումների, իսկ «266b-ը՝ չեկերի և վարկային քարտերի հետ կապված մեքենայությունների համար:

Ֆրանսիական քրեական օրենսդրության մեջ սեփականության հա-րաբերությունների պաշտպանությանն ուղղված քրեաիրավական նոր-մերը ևս բազմաթիվ են: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցակազմի հատկանիշներին իրենց կառուցվածքով և բովանդակությամբ առավել մոտ հանցակազմերը սույն հետազոտության շրջանակում ենթակա են առանձին վերլուծության: Այսպես՝ Ֆրանսիայի օրենսգրքի երրորդ գլխի հոդված 313-1-ը խարդախությունը բնորոշում է որպես կեղծ անուն, կեղծ կարգավիճակ՝ օգտագործելով կամ իրական կարգավիճակը չարաշահելով կամ այլ խաբեությամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձին մոլորության մեջ գցելը, որը նպատակ ունի նրանց կամ երրորդ անձանց հարկելու՝ ի վնաս իրենց հանձնել դրամական միջոցներ, արժեթղթեր, գույք, մատուցել գույքային բնույթի ծա-ռայություններ կամ կնքել անշահավետ գործարք, որն առաջացնում է պարտավորություններ կամ ազատում է դրանցից[3]*:*

---

[3] *Уголовный кодекс Франции (пер. с фр. Н. Е. Крыловой; науч. ред. Л. В. Головко, Н. Е. Крылова, СПб., 2002).*

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիական օրենսդիրը ևս սահմանում է այն արարքների սպառիչ ցանկը, որոնց միջոցով կարող է կատարվել այս հանցատեսակը՝ նախատեսելով կատարման եղանակները:

Ուշագրավ է նաև Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդված 316-6-ը: Այն պատասխանատվություն է սահմանում հրապարակային սակարկությունների անցկացման ժամանակ կատարվող չարաշահումների համար, որի նպատակն է նվերներ տալու, խոստումների կամ նախնական համաձայնության կամ խարդախության որևէ այլ եղանակով, գներն արհեստականորեն իջեցնելու միջոցով ի վնաս այլ անձանց գործարքներ կնքելը, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելը:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի հոդված 314-1-ը պատասխանատվություն է նախատեսում «վստահությունը չարաշահելու» համար: Քննարկվող հանցակազմը դրսևորվում է նրանում, որ հանցավորն ի վնաս այլ անձի յուրացնում է իրեն վստահված գույքը, դրամական միջոցները, արժեթղթերը, որոնք վերջինս պարտավորվել էր ժամանակին վերադարձնել կամ ներկայացնել կամ օգտագործել նպատակային նշանակությամբ:

Այս հանցակազմն իր կառուցվածքային առանձնահատկություններով և բովանդակությամբ առավել համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 179-ին, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում յուրացնելու կամ վատնելու համար:

Ֆրանսիական քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսվում նաև այն իրավիճակների համար, երբ անձը, իմանալով իր անվճարունակության մասին կամ չցանկանալով վճարել, պատվիրում է սնունդ կամ խմիչք դրանց վաճառքով զբաղվող հաստատությունում կամ տրանսպորտային միջոցը լիցքավորում է վառելանյութով կամ պատվիրում (զբաղեցնում) է սենյակ (սենյակներ) հյուրանոցում կամ բնակության համար սենյակներ տրամադրող այլ հաստատությունում կամ պատվիրում է տաքսի կամ այլ անհատական տրանսպորտային միջոց:

Ինչպես ակնհայտ է տվյալ բնորոշումից, օբյեկտիվ կողմի վերջին երկու դրսևորումները իրենց բովանդակությամբ համընկնում են խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմի հատկանիշներին, և կարելի է եզրակացնել, որ թեև ֆրանսիական օրենսդրությունը տվյալ հանցակազմն ուղղակիորեն չի նախատեսում, սակայն դրա որոշ դրսևորումներ, այնուամենայնիվ, տարբեր հոդվածներում առկա են:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև իսպանական օրենսդրի մոտեցումը քննարկվող հանցակազմի իրավակարգավորմանը: Իսպանիայի քրեական օրենսգրքի հոդված 248-ի դիսպոզիցիան սահմանում է, որ խարդախություն է համարվում այն արարքը, որի դեպքում անձը խաբեությամբ, որը բավարար է այլ անձին մոլորության մեջ գցելու համար, ստիպում է նրան այնպիսի գործո-

դություններ կատարել, որոնք գույքային վնաս են պատճառում իրեն կամ երրորդ անձին[4]*:*

Ի տարբերություն հայրենական օրենսդրությամբ արտացոլված մոտեցման՝ այս հանցակազմը ներառում է խաբեությամբ գույքային վնաս պատճառելու բոլոր իրավիճակները, անկախ այն հանգամանքից՝ կատարվածը հափշտակությո՞ւն է, թե՞ գույքային վնաս պատճառելու այլ դրսևորում:

Իսպանական քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանվում նաև էլեկտրաէներգիայի և այլ էներգառեսուրսների օգտագործման հետ կապված խաբեության համար: Քրեորեն պատժելի են այն արարքները, որոնց միջոցով անձն ապօրինաբար տիրանում է այլ անձին պատկանող էներգակիրներին, միանում է ուրիշի էլեկտրական, գազի, ջրի կամ այլ ցանցերի, փոփոխում է չափող սարքերի ցուցիչները կամ նշված նպատակների համար օգտագործում է ապօրինի այլ միջոցներ: Քննարկվող հանցակազմն իր էությամբ մոտ է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցակազմին և, ըստ էության, խաբությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու առանձին դրսևորում է:

Սկանդինավյան երկրների քրեական օրենսդրությունն առանձնացնում է մեկ ընդհանուր քրեաիրավական նորմ, որը պատասխանատվություն է նախատեսում խաբեությամբ կատարվող բոլոր հանցավոր ոտնձգությունների համար: Օրինակ՝ Ֆինլանդիայի քրեական օրենսգիրքը խաբեությամբ գույքային վնաս պատճառելը բնորոշում է որպես հանցավորի կամ երրորդ անձի օգտին գույք ձեռք բերելը՝ այլ անձին մոլորության մեջ գցելու ճանապարհով: Ֆինլանդիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ խարդախությունը և կեղծիքը ներառում են հետևյալ արարքները՝ 1) ապահովագրական խարդախություն, 2) արխիվային, օտարերկրյա կամ մասնավոր փաստաթղթերի կեղծում, 3) սահմանային նշանների տեղաշարժում, 4) չափող սարքերի ցուցիչների կեղծում: Ֆիննական օրենքի բովանդակությունից ուղղակիորեն բխում է նաև, որ խարդախությունը կատարվում է կեղծ տվյալներ հայտնելու կամ փաստերն աղավաղելու ճանապարհով[5]*:*

Մեր կարծիքով, նման իրավակարգավորումը ևս անթերի չէ, քանի որ չափազանց ընդհանրական մոտեցումը կարող է խառնաշփոթ առաջացնել իրավակիրառական ոլորտում, իսկ գույքային վնաս պատճառելու առանձին դրսևորումների հստակ սահմանումը բավականաչափ մեծ տիրույթ է թողնում այս հանցանքի կատարման տարատեսակ նոր եղանակներ որոնելու առումով:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի հոդված 146*-ը սահմանում է, որ խարդախ է համարվում այն անձը, որն իր կամ երրորդ անձի ապօրինի հարստացման նպատակով այլ անձի խաբեության ճա-*

---

[4] *Уголовный кодекс Испании, М., 1998.*

[5] *Տե՛ս Уголовное право зарубежных государств. Особенная часть: учебное пособие (под ред. И. Д. Козочкина), М., 2004. с. 42.*

նապահով գցում է մոլորության մեջ՝ ներկայացնելով կեղծ փաստեր կամ իրական փաստերը թաքցնելով կամ անձի մոլորության ամրապնդմանը միտված տվյալներ հայտնելով, որի հետևանքով անձն ի վնաս իրեն գործողություններ է կատարում[6]:

Փաստորեն, շվեյցարական օրենսդիրը նախատեսում է խարդախության կատարման միայն մեկ եղանակ՝ խաբեություն:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի հոդված 151-ը պատասխանատվություն է նախատեսում չարամտորեն գույքային վնաս պատճառելու համար: Այս հոդվածի համաձայն՝ պատժի է ենթակա այն անձը, որը, առանց ուրիշի հաշվին հարստանալու նպատակի, խաբեության ճանապարհով վերջինիս գցում է մոլորության մեջ՝ ներկայացնելով կեղծ փաստեր կամ իրական փաստերը թաքցնելով կամ անձի մոլորության ամրապնդմանը միտված տվյալներ հայտնելով, որի հետևանքով անձն ի վնաս իրեն կամ երրորդ անձանց գործողություններ է կատարում[7]: Այս հանցատեսակի առանձնահատկությունն այն է, որ հանցավոր արարքի հետևանքով առաջացած մոլորության հետևանքով սեփականատերը գույքային վնաս է պատճառում իրեն կամ երրորդ անձանց:

Շվեյցարական քրեական օրենսգրքի հոդված 149-ը պատասխանատվություն է սահմանում չեկերի և վճարային (վարկային) քարտերի հետ կապված խարդախությունների համար: Համաձայն այս հանցակազմի՝ պատժի է ենթակա այն անձը, որը, լինելով անվճարունակ կամ չցանկանալով վճարել, խաբեությամբ օգտագործում է այլ անձի պատկանող չեկը կամ վճարային քարտը, որպեսզի նրա հաշվին ստանա գույքային օգուտ կամ վճարի ծառայությունների դիմաց: Հոդված 149-ը քրեական պատասխանատվություն է նախատեսում ռեստորանում կամ հյուրանոցում հաշիվը չվճարելու համար: Համաձայն այս քրեաիրավական նորմի՝ պատժելի է այն անձի արարքը, որը բնակվել է հյուրանոցում, պատվիրել է սնունդ կամ խմիչք և հրաժարվել է վճարել: Ուշագրավ է նաև Շվեյցարիայի քրեական օրենսգրքի հոդված 150-ով նախատեսված հանցակազմը, որը պատասխանատվություն է սահմանում խաբեությամբ այս կամ այն ծառայությունն ստանալու համար: Համաձայն այս նորմի՝ պատժվում է այն անձը, որը պատվիրել է որևէ ծառայություն, մասնավորապես օգտվել է հանրային տրանսպորտից, մասնակցել է էքսկուրսիաների, հաճախել ցուցահանդեսներ կամ նմանաբնույթ միջոցառումների, կամ ավտոմատ վաճառքի սարքերից ապրանք է ստացել, նախապես իմանալով, որ դա վճարովի է, հրաժարվել է վճարել մատուցված ծառայության համար: Բացի այդ՝ շվեյցարական քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսվում նաև էլեկտրաէներգիայի ապօրինի օգտագործման համար (հոդված 142):

Անգլիական օրենսդրությամբ խաբեությամբ գույքին տիրանալուն առնչվող հանցատեսակները նախատեսված են 1968 թ. ընդուն-

---

[6] *Նույն տեղում, էջ 43:*

[7] *Նույն տեղում, էջ 44:*

ված «Գողության մասին» օրենքով՝ «Խարդախություն կամ շորթում» բաժնում: Այս հանցագործությունների միավորող հատկանիշն այն է, որ անձը խաբեությամբ այլ անձի գցում է մոլորության մեջ և անպատիվ կերպով տիրանում է ուրիշի գույքին՝ վերջինիս ընդմիշտ այդ գույքից զրկելու նպատակով: Ընդհանուր առմամբ սահմանված են խաբեությամբ գույք ձեռք բերելուն առնչվող յոթ հանցակազմեր: Ընդ որում, «գույք» հասկացությունը ներառում է ոչ միայն շարժական կամ անշարժ գույքը, դրամական միջոցները, այլև գույքի նկատմամբ իրավունքը, ինչպես նաև ոչ գույքային իրավունքները[8]: Նախատեսված են խաբեության միջոցով գույքային վնաս պատճառելու հետևյալ տարատեսակները. 1) պարտքի մարումից խուսափելը, 2) ապահովագրական վճարներից խուսափելը կամ դրանք նվազեցնելը, 3) աշխատավարձի չափի ավելացումը, 4) գրազով հաղթելը: Ընդ որում, էական չէ՝ անձը գույքային օգուտ է ստացել ի՞նչ, թե՞ ուրիշի համար, գործել է դիտավորությա՞մբ, թե՞ անզգուշությամբ, մոլորության մեջ է գցել խոսքո՞վ, թե՞ գործողությամբ կամ վարքագծով, հայտնել է կեղծ իրավաբանակա՞ն, թե՞ փաստական հանգամանքներ[9]: Ինչ վերաբերում է տարբեր էներգակիրների ապօրինի օգտագործմանը, ապա անգլիական օրենսդրության իմաստով դրանք չեն համարվում գույք և, հետևաբար, չեն կարող հափշտակվել: Սա իհարկե, չի նշանակում, որ էլեկտրաէներգիայի ապօրինի օգտագործումը չի հանգեցնում քրեական պատասխանատվության: Համաձայն վերոնշյալ օրենքի հոդված 13-ի՝ էլեկտրաէներգիայի ապօրինի (առանց համապատասխան թույլտվության) օգտագործումը հանցագործություն է: Նշված նորմը թույլ է տալիս քրեական պատասխանատվության ենթարկել ինչպես այն դեպքերի համար, երբ ապօրինի միացում է կատարվում հանրային էլեկտրական ցանցին, այնպես էլ այն իրավիճակների համար, երբ ուրիշի բնակարան կամ աշխատավայր ապօրինաբար մուտք գործած անձը միացնում է էլեկտրական սարքեր կամ օգտվում է դրանցից[10]:

Ելնելով անգլիական օրենսդրության հայտնի առանձնահատկություններից՝ բավականաչափ դժվար է զուգահեռներ անցկացնել ՀՀ քրեական օրենսգրքի հետ, սակայն որոշ ուշագրավ մոտեցումներ կարող են հաշվի առնվել հայրենական օրենսդրության հետագա կատարելագործման և լրամշակման գործընթացում: Խոսքը հատկապես այն մոտեցումների մասին է, որոնք թույլ են տալիս առավել ամբողջական և համապարփակ քրեական պատասխանատվություն սահմանել խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու համար:

ԱՄՆ քրեական օրենսդրության մեջ ևս չի առանձնացվում խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով գույքային վնաս պատճառելու ինքնուրույն քրեաիրավական նորմ: Դրա հետ մեկ-

---

[8] *Курс уголовного права в 5 т., т. 5. Особенная часть (под ред. Г. Н. Борзенкова, В. С. Комиссарова), М., 2002, с. 217.*

[9] *Уголовное право зарубежных государств. Особенная часть, с. 482.*

[10] *Նույն տեղում, էջ 33:*

տեղ՝ տարբեր նահանգների քրեական օրենսգրքերով նախատեսված են արարքներ, որոնք իրենց էությամբ բավականաչափ մոտ են ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցակազմի հատկանիշներին:

Տեխաս նահանգի քրեական օրենսգրքի հոդված C «31.01(5)-ով պատասխանատվություն է նախատեսվում ոչ շոշափելի գույքի հափշտակության համար: Քննարկվող հոդվածում խոսքը վերաբերում է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և գոլորշու հափշտակությանը: Նյու Յորք նահանգի քրեական օրենսգրքով որպես հափշտակության տեսակ առանձնացված է խաբեության եղանակով կատարված գողությունը: Այս հանցատեսակի էությունն այն է, որ հանցագործը մոլորության մեջ է գցում տուժողին, նրան հաղորդելով կեղծ փաստեր, որի հետևանքով վերջինս կամովին հանցավորին է հանձնում իր գույքը[11]:

Այս նորմը առավել համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 178-ով նախատեսված խարդախության հանցակազմի հատկանիշներին:

Կարևոր է նաև Ճապոնիայի քրեական օրենսդրությամբ նախատեսված՝ խաբեության միջոցով կատարվող հանցագործությունների ուսումնասիրությունը: Ճապոնիայի քրեական օրենսգրքի գլուխ 37-ը վերնագրված է՝ «Խարդախություն և շորթում»: Խարդախության հանցակազմը նախատեսված է հոդված 246-ով, որի համաձայն՝ պատժվում է նա, որը խաբեության ճանապարհով տիրացել է ուրիշի գույքին կամ ստացել է գույքային օգուտ իր կամ այլ անձի համար: Տվյալ օրենսգրքի հոդված 245-ը ուղղակիորեն սահմանում է, որ էլեկտրականությունը համարվում է գույք և կարող է լինել հափշտակության առարկա: Բացի այդ, օրենսգրքի հոդված 248-ը քրեական պատասխանատվություն է սահմանում այն անձի համար, որը, օգտվելով տուժողի անչափահաս կամ անմեղսունակ լինելուց, խաբեության ճանապարհով ստիպում է վերջինիս իրեն հանձնել գույք կամ գույքի նկատմամբ իրավունք: Ճապոնական քրեական օրենսգրքում (հոդվածներ 247, 250), որպես խաբեությամբ գույքային վնաս պատճառելու հատուկ սուբյեկտ առանձնացվում է այն անձը, որին տուժողը վստահել էր իր գործերի կառավարումը[12]:

Ինչպես տեսնում ենք, ճապոնական օրենսդիրը ևս չի առանձնացնում հատուկ նորմ՝ նվիրված խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելուն: Սակայն որոշ մոտեցումներ կարող են օգտակար լինել ՀՀ քրեական օրենսգրքի հետագա լրամշակման գործընթացում: Ասվածը հատկապես վերաբերում է հատուկ սուբյեկտի կողմից այս հանցանքը կատարելուն, քանզի մեր համոզմամբ, նշված դեպքում արարքը ձեռք է բերում առավել բարձր հանրային վտանգավորություն:

Ամփոփելով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցատեսակի արտա-

---

[11] Правовая система США, вып. 3, М., 2006, с. 718.

[12] Уголовное право зарубежных государств. Особенная часть, с. 485.

սահմանյան երկրների օրենսդրությամբ առկա կարգավորումների ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ այս հանցակազմն ուղղակիորեն սահմանված չէ որևէ երկրի քրեական օրենսգրքով, սակայն քննարկվող հանցագործության բազմաթիվ դրսևորումներ, այնուամենայնիվ, նախատեսված են խարդախության կամ վստահությունը չարաշահելու նորմերով: Խաբեությունը՝ որպես խարդախության կարևորագույն հատկանիշ, այս կամ այն ձևակերպմամբ, նախատեսված է տարբեր երկրների քրեական օրենսգրքերով: Նույնը վերաբերում է նաև վստահությունը չարաշահելու հատկանիշին, սակայն հանցագործության օբյեկտիվ կողմի այս դրսևորումը ոչ միշտ է կապվում խարդախության հանցակազմի հետ և, շատ դեպքերում, նախատեսված է որպես ինքնուրույն հանցատեսակ: Բացի այդ, արտասահմանյան շատ երկրների քրեական օրենսդրություններով նախատեսված են խարդախության առանձին տարատեսակներ, որոնցից շատերն ընդգրկում են խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցատեսակն ամբողջությամբ կամ դրա մասնակի դրսևորումները:

Մեր կարծիքով, սակայն, հայրենական օրենսդիրն այս առումով սահմանել է ավելի համապարփակ մոտեցում՝ առանձնացնելով հափշտակության դրսևորումները խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցատեսակից: Այլ խնդիր է, որ ՀՀ քրեական օրենսգիրքն ունի հիմնովին լրամշակման կարիք: Նախ՝ անհրաժեշտ է սահմանել «հափշտակություն» հասկացությունը, որը թույլ կտա առավել հստակ տարբերակել հափշտակությունը գույքային վնաս պատճառելու այլ դրսևորումներից: Բացի այդ, պետք է կատարելագործել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված քրեաիրավական նորմը, քանզի ներկա իրավակարգավորմամբ այն ի զորու չէ ամբողջությամբ իրագործելու քննարկվող հասարակական հարաբերությունների արդյունավետ քրեաիրավական պաշտպանությունը:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ВОПРОСЫ БОРЬБЫ С ПРИЧИНЕНИЕМ ИМУЩЕСТВЕННОГО УЩЕРБА ПУТЕМ ОБМАНА ИЛИ ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ ДОВЕРИЕМ

АВЕТИСЯН Л. Н.

Резюме

Сравнительный анализ уголовных законодательств иностранных государств и РА приводит к заключению, что преступления, совершаемые путем обмана или злоупотребления доверием, не зафиксированы ни в одном уголовном кодексе (за исключением стран постсоветского пространства, базой

законодательств которых является "модельный УК"), однако во многих случаях данное преступление рассматривается в качестве норм мошенничества или злоупотребления доверием. В УК многих стран представлены разные типы мошенничества, большая часть которых полностью либо частично включает в себя преступное деяние по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием. В армянском законодательстве отражен комплексный подход к данной проблеме, отличающий типы хищения от преступлений по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием.

LEGISLATIVE ISSUES IN FIGHTING THE INFLICTION OF DAMAGE TO PROPERTY BY FRAUD OR ABUSE OF TRUST

L. AVETISYAN

Abstract

The present paper presents a comparative analysis of the international experience for fighting the infliction of damage to property by fraud or abuse of trust. The study of the legal systems and criminal codes of different countries, as well as their comparison with the RA Criminal code, the paper envisages criminal liability for the offences against property.

The research results can prove to be useful in the further development of the RA Criminal Code.